

«Միիթար Սեբաստացի» կրթահամալիր 2016թ.

Մաթեմատիկա, 4-րդ դասարան

6-րդ տարբերակ

1-10-րդ առաջադրանքներում նշի՛ր ճիշտ պատասխանը:

1. Ընտրիր այն հնգանիշ թիվը, որի տասնավորը 1 է, հազարավորը՝ 2, իսկ մյուս բոլոր թվանշանները՝ 6 :

1) 62612 2) 66612 3) 21666 4) 62616 5) 61261:

2. Ամենամեծ և ամենափոքր եռանիշ թվերի գումարը կլինի.

1) 1909 2) 199 3) 999 4) 1019 5) 1099

3. Քանի՞ բնական թիվ կա 22 և 32 թվերի միջև:

1) 5 2) 7 3) 9 4) 10 5) 11

4. Գտիր 708 թիվը 100-ի բաժանելիս ստացված մնացորդը:

1) 2 2) 4 3) 6 4) 8 5) 10:

5. Եռանիշ թվի թվանշանների գումարը հավասար է 3: Նշված թվերից ո՞րն է այդ պայմանին բավարարող ամենափոքր թիվը:

1) 300 2) 111 3) 210 4) 120 5) 201

6. Ընդգծիր այն տողը, որտեղ բոլոր թվերը կենտ են:

1) 351, 3503, 3677, 35

2) 4334 4372, 4351, 8997

3) 1889, 288, 3889, 4889

4) 7653, 7645, 3746, 9282

5) 7892, 7890, 7892, 7909:

7. Քանի՞ րոպե է 7ժ 40ր:

1) 420ր

2) 430ր

3) 440ր

4) 450ր

5) 460ր

8. Հաշվիր 54 թվի հնգապատիկը.

1) 54

2) 108

3) 216

4) 5454

5) 270:

9. $3 + 3 * 3 - 3 = 303$ գրության մեջ «*»-ի փոխարեն ի՞նչ թվանշան կամ գործողության նշան պետք է գրել, որպեսզի հավասարությունը ճիշտ լինի:

1) +

2) –

3) x

4) 0

5) 2 :

10. Գիրքն ունի 120 էջ: Լևոնը կարդաց գրքի $1/3$ մասը: Քանի՞ էջ կարդաց Լևոնը:

1)123

2)117

3)360

4)30

5)40

11-15 առաջադրանքների ճիշտ պատասխանները գրի՛ր յուրաքանչյուր աշխատանքից հետո նշված տեղում՝ կետերի փոխարեն:

11. Առանց մնացորդի և՛ 5-ի, և՛ 4-ի բաժանվող ամենափոքր թվից հանեցին առանց մնացորդի և՛ 2-ի, և՛ 3-ի բաժանվող ամենափոքր թիվը: Ի՞նչ թիվ ստացվեց:

Պատասխան՝

12. Ո՞ր թվանշանով է վերջանում 7, 8, 9 թվերի արտադրյալը:

Պատասխան՝

13. $200 + 120 + 20 : 5 = 228$ արտահայտության մեջ փակագծերն այնպես դիր, որ ստացվի ճիշտ հավասարություն:

Պատասխան՝

14. Կռահելով օրինաչափությունը, գտիր հաջորդականության հինգերորդ անդամը:

43, 49, 55, 61, _____

Պատասխան՝

15. Հաշվիր $1225 - 625 : (5 + 20)$ արտահայտության արժեքը:

Պատասխան՝

16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն և հիմնավորված ներկայացրո՛ւ առաջադրանքներից հետո նշված տեղում:

16. Քառակուսաձև հողամասի պարագիծը 24 մ է: Գտիր այդ հողամասի մակերեսը:

Պատասխան՝

17. Երկու պահեստում կար 1260 կգ կարտոֆիլ: Երբ յուրաքանչյուր պահեստից տարան հավասար քանակությամբ կարտոֆիլ, առաջինում մնաց 860 կգ, իսկ մյուսում՝ 140 կգ կարտոֆիլ: Քանի՞ կգ տարան յուրաքանչյուր պահեստից:

Պատասխան՝